«Թիֆլիսի բնակչութեան ընդամէնը 25 առ հարիւր վրացիներ են, մինչ՝ քաղաքային խորհրդի մէջ նրանք մեծամասնութիւն են կազմում։ Քաղաքի գործադիր մարմնի 36 անդամներից միայն 4-ը հայ են, մինչ հայութիւնը բնակչութեան 43% է կազմում։ Անդրկովկասի երկաթուղիների կենդրոնական (համանդրկովկասեան) վարչութեան մէջ վրացի պաշտօնեաները կազմում են 66 տոկոս, իսկ հայերը... 3 տոկոս»։

Մեկնաբանութեան կարո՞ւ են այս բազմախօս թուերը։ Ու խօսի՛լ ազգային-մշակութային ինքնավարութեան մասին այնտեղ, ուր քաղաքացիական իրաւունքների հաւասարութիւն անգամ չկայ, այլ տիրող եւ տիրուած, արտօնեալ եւ զրկուած կողմերի յարաբերութիւն։ Էլ ի՞նչ տարբերութիւն Թիֆլիսի այսօրուան քաղաքային խորհուրդի եւ նախապատերազմեանի միջեւ։ Այն, որ ցարական ըէժիմը ընտրող-ընտրուողների մէջ խտրութիւն էր դնում նրանց քսակի, շարժական եւ անշարժ հարստութեան տեսակէտից, Խորհրդայինը՝ ազգային պատկանելիութեան։ Առաջ Սոլոլակի հայ բուրժուազիան էր նստած Թիֆլիսի քաղաքային խորհրդարանում, նա էր քամում հայկական դաւառների եւ Թիֆլիսի աշխատաւորութեան կենսական հիւթերը, ինչ է՝ Թիֆլիսը սալայատակէ եւ բարեզարդէ։ Իսկ այսօր Թիֆլիսի վրաց ազգի տարրն է այդ խորհրդարանի տէրը, նա է գտնւում հայութիւնը զրկողի դերում։ Եւ եթէ առաջ իրենց հարստութեամբ վրացիներին գերազանցող հայազգի անհատներ էին զրկում իրենց դասակից վրացիներին, քանի որ օրէնքը միայն հարուստներին էր տուել ընտրելու եւ ընտրուելու իրաւունք, այսօր զրկանքը կատարւում է հայ աշխատաւորութեան հաշւոյն, այն էլ՝ վրացի աշխատաւորութեան անունով, քանի որ այժմ այս տարրերին է Խորհրդային օրէնքը ընտրելու եւ ընտրուելու իրաւունք վերապահել։

Ցաւը այժմ աւելի խորն է մանաւանդ այն պատճառով, որ զրկանքը կատարւում է հաւասարութեան, եղբայրութեա՛ն անունով՝ եւ այն՝ տասնամեակներ այդ նշանաբանները պարունակող դրօշի տակ պայքարելուց եւ «յաղթանակ» տանելուց յետոյ։

Կայ նաեւ այն տարբերութիւնը, որ Թիֆլիսի հայ նախկին բուրժուաները վրացի բուրժուաներից անհամեմատ աւելի էին, իսկ այսօր այդ քաղաքի վրացի պրոլետարները աւելի մեծթիւ չեն ներկայացնում, քան հայ պրոլետարները։

Պատկերը տարբեր չէ նաեւ դրականութեան, դիտութեան, վարչական կեանքի մէջ, այլն եւ այլն։

Կացութիւնը տարբեր չէ նաեւ Ատրբէջանում։

Եթէ այսօր արտօնեալ հայեր կան, ապա դրանք չեկիստներ, կուսակցական բիւրոկրատներ եւ Խորհրդային դրօշի տակ թաղնուած ռուսացման քաղաքականութեան հայազգի գործակալներ են, բայց ոչ երբեք՝ հայ ժողովրդական խաւերը։

Վերջապէս, մշակութային ինքնավարութիւն ասելով չենք հասկանում միայն այն, որ տուեալ երկրի այս կամ այն ազգային փոքրամասնութեան դպրոցները, թատրոնը, դիտութիւնը եւայլն պետական միջոցներով պահուին. միջոցներ, որոնք գանձւում են նոյն այդ տարրերից։ Մշակութային ինքնավարութեան հիմնական ստորոգելիներից մէկն այն է, որ նրա ենթական եւ առարկան միանգամայն, ազգային փոքրամասնութիւնը, կազմակերպւում է, որպէս այդպիսին, ստեղծում է իր սեփական մարմինները,— համաձայն ընդհանուր կամ այլ կարգի — թո՛ղ լինի Խորհրդային — ընտրական իրաւունքի։

Արդ, հայերը Վրաստանում եւ Ատրբէջանում, թաթարները Վրաստանում եւ Ատրբէջանում, ռուսները այդ երեք երկրներում, մինգրելները, պարսիկները, յոյները, հրէաները, թալիշները, թաթերը եւ Անդրկովկասի միւս փոքրամասնութիւնները — թէկուզ նրանց «բանուորա-գիւղացիական», իրաւատէր խաւերը—կազմակերպուա՞ծ են որպէս այդպիսիք։ Ունի՞ն իրենց ազգային-մշակութային ինքնավար մարմինները։ Տուեալ երկրում պետական եւ էլեմտացոյցից համեմատական բաժին հանո՞ւմ է այդ մարմիններին։ Դպրոցի, թատրոնի, դիտութեանց եւ մշակութային այլ կարիքների համար տրամադրուած նիւթական միջոցները ծախսո՞ւմ են նոյն այդ մարմիննե-